

## Յ. Յ. Դ. ՄԱՆԻՖԵՍՏ

Չայեր,

Այսօր հայոց հարցը նոր շրջանի մեջ է մտնում: Դարերից ի վեր ստրուկ թիրախահայաստանը ազատութիւն է պահանջում:

Չայը, որ դեռ երէկ, շլինքը ծռած, Եւրոպայից օգնութիւն էր աղերսում, այսօր համոզուելով, որ օտարի վրայ դրած յոյսը ցնորք է, վճռել է ձեռքով պաշտպանել իր իրաւունքը, իր կայքը, պատիւը, ընտանիքը...

Դարերով ճնշուել է հայ ժողովուրդը թուրք բռնապետների լծի տակ: Դարերի ընթացքում ցանել է, բայց պտուղը երբեք չի վայելել. աւազակ տիրողը յափշտակել է: Դարերի ընթացքում անագրել են նրա սրբութիւնները, բայց հայը կրել է այս բոլորը, կրել է համբերութեամբ՝ շարունակելով ողողել հայրենիքի հողը իր քրտինքով... Դարերի ընթացքում հայը կարծէք թէ կամեցաւ ապացուցանել մարդկութեանը, թէ կարելի է ազատութիւնը ձեռք բերել կուլտուրական ճանապարհով: Քաղաքակիրթ Եւրոպան խոստացաւ վերջ տալ թուրքերի բարբարոսութիւններին Չայաստանում: Սակայն, անցան տարիները տարիների ետեւից, եւ հայերի դրութիւնը իրանց հայրենիքում ոչ թէ միայն չլաւացաւ, այլ աւելի ծանրացաւ եւ այժմ միանգամայն անտանելի, դժոխային է դարձել՝ հայի պէս համբերող ազգն անգամ անկարող է շարունակել իր գոյութիւնը այդպիսի երկրում:

Բայց համբերութիւնն էլ ունի իր աահմանը: Գազաթնակէտին հասցրած հալածանքները, վերջապէս, սթափեցրին հային. այսօր նա վճռել է կամ մեռնել կամ ազատուել: Եւ ահա էրզրումը եւ ապա Կ. Պոլիսը աներկիւղ բողոքում են անիրաւութիւնների դէմ. Չայը այլեւս չի խնդրում, այլ պահանջում է եւ պահանջում է զէնքը ձեռքին...

Այսօր Եւրոպան իր առաջ տեսնում է մի ամբողջ ժողովուրդ, մի ամբողջ ազգ, որ սկսել է պաշտպանել իր մարդկային իրաւունքները:

Այդ ժողովուրդը հասկացել է, որ իր ոյժը իր մեջ է. երէկուան ստրուկ, համբերող հայաստանցին յեղափոխական է դարձել:

Չայոց հարցի վճռի յետաձգելը այլեւս անկարելի է: Այսպիսի մի պատմական ճգնաժամի միջոցին, առաջին հարցը, որ պէտք է զբաղեցնի ամէն մի լուրջ հայրենասէրի,-այդ բոլոր յեղափոխական ոյժերի միութեան եւ դաշնակցութեան հարցն է:

Այդ յեղափոխական գաղափարի դրօշակիրն է «Չայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը» որ սրանով դիմում է բոլոր հայերին եւ հրաւիրում է կանգնել մի դրօշակի տակ: »Չայ

Յեղափոխականների Դաշնակցությունը» թեև նոր է հանդես գալիս իբրև կազմակերպություն, բայց նա վաղուց գործող խմբերի միությունն է. »Դաշնակցությունը« ձգտելու է միացնել բոլոր ոյժերը՝ կապելով իր հետ բոլոր կենտրոնները: Նպատակ դնելով Թիւրքաց Յայաստանի քաղաքական եւ տնտեսական ազատութիւնը՝ »Դաշնակցությունը« մտել է այն կռուի մէջ, որ սկսել է ինքը ժողովուրդը տաճկաց կառավարութեան դէմ՝ ուխտելով մինչեւ արեան վերջին կաթիլը կռուել հայրենիքի ազատութեան համար: Միանա՛նք ամենքս ժողովրդի հետ, որ բարձրացրել է ազատութեան դրօշակը. նա, ով այսօր երեսը կը դարձնի ժողովրդից եւ չի հետեւիլ նրան, այդ ժողովրդի թշնամին է...Ուրեմն, եղբայրներ, միանա՛նք յանուն սուրբ գործի՝ ընդհանուր թշնամու դէմ: Եւ դո՛ւք երիտասարդներ, միշտ եւ ամէն տեղ վսեմ գաղափարների պաշտպաններ, միացէ՛ք ժողովրդի հետ:

Եւ դո՛ւք, ալեգարդ ծերունիներ, ոգեւորեցէ՛ք ձեր որդոց օգնեցէ՛ք նոցա ձեր բազմամեայ փորձառութեամբ:

Եւ դո՛ւք, հարուստներ, բաց արեք ձեր քսակները զէնք հայթայթելու ժողովրդին, որ նա կարող լինի պաշտպանել իր կուրծքը, որ բաց է արել թշնամու դէմ:

Եւ դո՛ւ, հայ կին, ոգի ներշնչիր սուրբ գործի մէջ:

Եւ դո՛ւ, հայ հոգեւորական, օրհնի՛ր ազատութեան զինուորներին...

Սպասելու ժամանակ չէ...

Համախմբուե՛նք, հայեր, եւ քաջութեամբ առաջ տանենք հայրենիքի ազատութեան սուրբ գործը:

**»ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՄԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ«**